ԹԵՄԱ 3. ՎԵՐԱԿՈՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ XIX ԴԱՐՈՒՄ

§ 28. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ

1 ԱՄՆ-ի վերջին խոշոր ձեռքբերումը եղել է 1867 թ., երբ Ռուսաստանից 7,2 միլիոն դոլարով գնվեց Ալյասկա թերակղզին և հարակից կղզիների 1,5 միլիոն կմ² տարածքը:

2 ԱՄՆ-ի նոր յուրացվող հողերը համարվում էին պետության սեփականությունը: Դրանք վերաբնակիչներին վաճառվում էին մատչելի գներով: Վերաբնակիչներին տրվեց նաև ազատ հողեր զավթելու իրավունք: Նրանք խլում էին հնդկացիների հողերը և հիմնում ֆերմերային տնտեսություններ: Հետո միայն օրինականացնում հողային իրավունքը՝ պետությանը գումար վճարելով: Իսկ բնիկ հնդկացիները բնաջնջվում էին կամ քշվում անջրդի տարածքներ:

3 Բամբակի պահանջարկը շատ մեծ էր ԱՄՆ-ում, որտեղ տեղի էր ունենում արդյունաբերական հեղաշրջում: Սակայն հարավի պլանտատորներին ձեռնտու էր արտադրված բամբակը ավելի բարձր գնով վաճառել բամբակի ավելի մեծ պահանջարկ ունեցող Անգլիային, Ռուսաստանին և ձեռք բերել ցածր գներով իրենց անհրաժեշտ ապրանքներ եվրոպական երկրներից: Մինչդեռ հյուսիսային նահանգների արդյունաբերողներին ձեռնտու էր, որ ամերիկյան բամբակը վաճառվի ԱՄՆ-ում, և հարավային նահանգները գնեն իրենց արտադրած արդյունաբերական ապրանքները: Այդ նպատակով ԱՄՆ-ը բարձր մաքսատուրքեր էր սահմանել եվրոպական երկրների արդյունաբերական ապրանքների վրա, ինչը ձեռնտու չէր հարավի պլանտատորներին: Հարավային նահանգներին տնտեսապես թուլացնելու և դիմադրությունը կոտրելու ամենից հարմար ձևը ստրկությունը վերացնելն էր:

4

Աբրահամ Լինքոլնը սպանվեց 1865 թ. ապրիլին 14–ին Վաշինգտոնի Ֆորդի թատրոնում ներկայացում դիտելիս: Հուղարկավորության գնացքը 14 օրվա ընթացքում նրա աճյունը հասցրեց իր հայրենի Իլինոյս նահանգի Սփրինգֆիլդ քաղաքը, որտեղ էլ թաղվեց:

5

Արտադրվում էին հաջորդաբար կրակող հրացաններ, «Նապոլեոն» տեսակի դաշտային հրանոթներ, որոնք խոցում էին նշանակետը 1600 մետր հեռավորության վրա: Ստեղծվեց գնդացրի նախատիպը՝ Գաթլինգի հրացանը:



6

Կոլումբիայի կառավարությունից մերժում ստանալով՝ վարձակալությամբ զիջել Պանամայի պարանոցը, աջակցեց Կոլումբիայի դեմ պանամացիների ապստամբությանը և նպաստեց 1903 թ. Պանամայի Հանրապետության հռչակմանը: Նորաթուխ հանրապետության հետ կնքեց Պանամայի ջրանցքը կառուցելու շահեկան պայմանագիր: Տիրելով Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միացման այդ հանգուցակետին՝ ԱՄՆ–ը ռազմավարական բացառիկ առավելություն ստացավ մյուս պետությունների նկատմամբ: